ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/85

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Պահապան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/22», «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/26», «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/37» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդ և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/41» գնանշման հարցում, հագուստի, հանդերձանքի և կրակմարիչների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» և «ԳՀԱՊՁԲ-7/41-3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4388-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/875-2020 գրության հիման վրա, 20.03.2020թ.-ին «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 23.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/85 համարի ծածկագիրը և 23.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

27.03.2020թ.-ին, 14.04.2020թ.-ին և 20.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.04.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/875-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/22-1, 07.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/26-1, 22.03.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/37-2 և 17.07.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/41-3 գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագրերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունը 18.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Պահապան» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 23.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Պահապան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4388-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«ՀՀ Ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է թիվ ՍՅ-ԼՕ-2020/85 ընթացակարգը (պատվիրատու ՀՀ Պաշտպանության նախարարություն) <<Պահապան>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: Ուսումնասիրելով ՀՀ Պաշտպանության նախարարությունից ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացված <<հիմնավորումները>> գտնում ենք, որ դրանք թերի են և հիմնազուրկ հետևյալ պատճառաբանություններով

Նախ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն

<<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները >>:

ՀՀ Պաշտպանության նախարարության և <<Պահապան>> ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ. կնքված <<ԷԱՃԱՊՁԲ-7/22-1>> ծածկագրով գնման պայմանագրով և կից 22.05.2019թ. կնքված N 1 համաձայնագրով <<Պահապան>> ՍՊԸ-ն ՀՀ Պաշտպանության նախարարությանը առավելագույնը մինչև 30.11.2019թ. պետք է մատակարարեր 8 անուն ապրանքատեսակ (տեսականին և քանակությունները տես պայմանագրին կից հավելվածներում): <<Պահապան >> ՍՊԸ-ն պայմանագրում սահմանված ժամկետներում

պատշաճ կերպով ՀՀ Պաշտպանության նախարարությանն է մատակարարել 4 անուն ապրանքատեսակները ամբողջությամբ, իսկ մնացած 4 անուն ապրանքատեսակներից չի մատակարարվել

1. 1000 հատ << Խալաթ բամբակյա բժշկական>>:

2. 1000 հատ <<Խոհարարական բամբակյա բաճկոն կանացի>>:

3. 50 հատ <<<Բաճկոև մորթե օձիքով, վատինե ներդիրով, ձմեռային>>:

4. 180 հատ <<Բաճկոն գարնանային-աշնանային, կիսաբրդյա, սև գույնի>> (պայմանագրով նախատեսված 200 հատից):

07.02.2019 թ.-ին կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/26-1 ծածկագրով մատակարարման պայմանագրով և կից 09.04.2019թ. թիվ 1 համաձայնագրով <<Պահապան >> ՍՊԸ-ն Պաշտպանության նախարարությանը առավելագույնը մինչև երրորդ եռամսյակ պետք է մատակարարեր 2 անուն ապրանքատեսակ, որոնցից չի մատակարարվել

1. 945 հատ <<Խալաթ հոսպիտալային տաք» (պայմանագրով նախատեսված 1775 հատից):

2. 1100 հատ <<Խոհարարի բամբակյա բաճկոն>> (պայմանագրով նախատեսված 2100) հատից:

22.03.2019 թ.-ին կնքված ԷԱՃԱՊՁԲ-7/37-2 ծածկագրով մատակարարման պայմանագրով և կից 21.05.2019թ. թիվ 1 հանաձայնագրով <<Պահապան >> ՍՊԸ-ն Պաշտպանության նախարարությանը առավելագույնը մինչև 30.11.2019թ. պետք է մատակարարեր 1 անուն ապրանքատեսակ, որից չի մատակարարվել

1. 107 000 ենթաօձիք (պայմանագրով նախատեսված 150 000 հատից):

17.07.2019 թ.-ին կնքված ԳՀԱՊՁԲ-7/41-3 ծածկագրով մատակարարման պայմանագրով <<Պահապան >> ՍՊԸ-ն Պաշտպանության նախարարությանը առավելագույնը մինչև 30.11.2019թ. պետք է մատակարարեր 1 անուն ապրանքատեսակ, որից չի մատակարարվել

1. 2195 լրակազմ կոստյում (պայմանագրով նախատեսված 2775 լրակազմից):

Վերոգրյալը հիմնավորում է, որ <<Պուսհապան >> ՍՊԸ-ն առավելապես կատարել է ստանձնած պայմանագրային պարտավորությունևևները, իսկ նշված մասնակի մատակարարված ապրանքատեսակների չմատատկարարելու հանգամանքում բացակայում է <<Պահապան >> ՍՊԸ-ի <<մեղքը>>, քանի որ, ինչպես հաճախ է պատահում, Պաշտպանության նախարարությունը ուշացումներով և ձգձգումներով է կնքում պայմանագրերը և համաձայնագրերը, նախորդ տարիներին բազմիցս իրազեկված լինելով,

որ արտադրության կազմակերպման և պայմանագրային պարտավորությունների կատարման համար <<Պահապան >> ՍՊԸ-ն հումքը և այլ պարագաները ներկրում է արտասահմանից, որը տևում է շուրջ 4 ամիս:

Այսպես.

ԷԱՃԱՊՁԲ-7/22-1 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 10.12.2018թ., մինչդեռ պայմանագիրը կնքվել է 25.03.2019թ. (շուրջ 3,5 ամիս անց): Նույն պայմանագրի համաձայնագիրը կնքվել է 22.05.2019թ. (տարվա սկզբից շուրջ 6 ամիս անց):

ԷԱՃԱՊՁԲ-7/26-1 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 12.12.2018թ. մինչդեռ պայմանագիրը կնքվել է 07.02.2019թ. (շուրջ 2 ամիս ուշացումով): Նույն պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը կնքվել է 09.04.2019թ. (պայմանագրի կնքումից շուրջ 2 ամիս անց):

ԷԱՃԱՊՁԲ-7/37-2 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 19.12.2018., մինչդեռ պայմանագիրը կնքվել է 22.03.2019թ. (շուրջ 3 ամիս անց): Նույն պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը կնքվել է 21.05.2019թ. (պայմանագրի կնքումից շուրջ 2 ամիս):

ԳՀԱՊՁԲ-7/41-3 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 04.06.2019թ., մինչդեռ պայմանագիրը կնքվել է 17.07.2019թ. (շուրջ 1,5 ամիս անց):

Պաշտպանության նախարարության կողմից նշված քանակություններով ամիսների անհիմն ու ապօրինի (ՀՀ Գնումների մասին օրենքի խախտումներով) բացթողումների, ապա շուրջ 4 ամիս տևող հումքի պատվիրման, պատրաստման և ՀՀ ներկրման պայմաններում արտադրողին, այսինք մեզ տարվա ընթացքում մնացել է ընդհամենը 2-4 ամիս ժամկետ բուն արտադրությամբ զբաղվելու և այդ ամիսների ընթացքում ամբողջ տարվա համար նախատեսված պայմանագրային պարտավորությունները կատարելու համար, որը ռեալ և իրատեսական չէ: Այսինքն Պաշտպանության նախարարության հիշյալ ուշացումները և ձգձգումներն են մեր կողմից որոշ ապրանքների թերմատակարարման միակ պատճառը:

Մեր ունեցած տեղեկություններով Պաշտպանության նախարարության ժամկետների հիշյալ բացթողումների պատճառով նման իրավիճակում են հայտվել նաև ՊՆ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտած այլ արտադրող ձեռնարկություններ ևս:

Վերը հիշատակված չմատակարարված ապրանքատեսակների հումքը մեզնից անկախ պատճառներով (Լարսի անցակետը 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր փակ լինելու և հերթերի գոյացման պատճառով) մեր ՍՊԸ է հասել 2019թ.-ի դեկտեմբեր ամսին: 10.12.2019թ. մենք թիվ 06/12 գրությամբ Պաշտպանության փոխնախարար

Մ.Ղամբարյանին հայտնել ենք հումքի ուշացման պատճառների, հումքի ստացման և արտադրության վերսկսման մասին, խնդրելով մնացած ապրանքատեսակների քանակությունները համաձայնվել մատակարարելու 2020թ. հունվար ամսվա աշխատանքային առաջին 20 օրերի ընթացքում, պատրաստականություն հայտնելով անհրաժեշտության դեպքում ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ և ուշացումների համար վճարելու տույժեր և տուգանքներ: Բանկային երաշխիքի առկայության պայմաններում իրավունք ունենալով ապրանքատեսակների քանակությունների 25%-ի մատակարարումը փոխանցելու հաջորդ տարի, Պաշտպանության նախարարությունը, մեզ անհայտ պատճառներով,չի բավարարել մեր խնդրանքը (համենայնդեպս գրավոր չի հայտնել մեր խնդրանքը բավարարելու կամ մերժելու մասին), որի պատճառով մինչ օրս չմատակարարված վերը հիշատակված հանդերձանքները պատրաստի կամ կիսաֆաբրիկատ վիճակում են գտնվում են մեր պահեստում: Միայն 2020թ. մարտի 17-ին է Պաշտպանության նախարարությունը միակողմանի լուծել վերը հիշատակված 4 պայմանագրերը և համաձայնագրերը:

Նշված 4 պայմանագրերի 2.1.1 կետերում շեշտված է, որ Գնորդը իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Նման պայմաններում տարակուսելի է, թե ինչու Պաշտպանության նախարարությունը պայմանագրերը չի լուծել պայմանագրերի վերջնաժամկետներից 30 օր անց,այլ դա կատարել է շուրջ 3,5 ամիս անց, այն դեպքում, երբ մենք խնդրել էինք համաձայնվել թերմատակարարված ապրանքների ամբողջական մատակարարումը կատարել առավելագույնը մինչև 2020թ. հունվար ամսվա վերջը: Հիշյալ 4 ծածկագրերով պայմանագրերի ընթացակարգերի ճակատագիրը օբյեկտիվ լուծելու համար խնդրում ենք Ձեր որոշման հրապարակման նիստը հետաձգել, ուսումնասիրելու համար հետևյալ էական հարցերը

1. Նշված 4 պայմանագրերին նախորդող մրցույթները հայտարարելու ժամանակ գնման առարկաները ներառված են եղել Գնումների պլանում և Գնումների պլանը հրապարակված է եղել Gnumner.am կայքում թե ոչ, որը ՀՀ Գնումների մասին օրենքի 15 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. համար 526-Ն որոշման 16 և 17 հոդվածների պարտադիր պայման է: Պլանը Gnumner.am կայքում չտեղադրելը օրինախախտում է հետևապես դրա հետ կապված մյուս գործողությունները ոչ իրավաչափ:

2. Պարզել, թե ինչու Պաշտպանության նախարարությունը հիշյալ պայմանագրերը և դրանց կից համաձայնագրերը միակողմանի չի լուծել պայմանգրերով նախատեսված ապրանքատեսակների չմատակարարման վերջնաժամկետները լրանալուց 30 օր անց, այլ դա կատարել է 3-4 ամիս ուշացումով:

3. Պաշտպանության փոխնախարարին մեր 10.12.2019թ. թիվ 06/12 գրությունից հետո ինչու մեր ՍՊԸ-ին ողջամիտ ժամկետ չի տրվել 2020թ. աշխատանքային առաջին 20 օրերի ընթացքում մատակարարելու թերի մատակարարված խմբաքանակները:»:

Վերոգրյալի հիման վրա, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2020/85 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին, 07.02.2019թ.-ին, 22.03.2019թ.-ին և 17.07.2019թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» և «ԳՀԱՊՁԲ-7/41-3» ծածկագրով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1» և «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» ծածկագրով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ.-ին, 09.04.2019թ.-ին և 21.05.2019թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1» և «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» ծածկագրով պետական գնման պայմանագրերի Համաձայնագրեր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.11.2019թ.-ը:

Թիվ «ԳՀԱՊՁԲ-7/41-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.11.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 18.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴՎԱ/974 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին, 07.02.2019թ.-ին, 22.03.2019թ.-ին և 17.07.2019թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» և «ԳՀԱՊՁԲ-7/41-3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 16.03.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ. թիվ 26/26-1/4388-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին, 07.02.2019թ.-ին և 22.03.2019թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1» և «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» ծածկագրով պետական գնման պայմանագրերի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 22.05.2019թ.-ին, 09.04.2019թ.-ին և 21.05.2019թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1» և «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» ծածկագրով պետական գնման պայմանագրերի Համաձայնագրերի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.11.2019թ.-ը:

17.07.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-7/41-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.11.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 18.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴՎԱ/974 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին, 07.02.2019թ.-ին, 22.03.2019թ.-ին և 17.07.2019թ.-ին կնքված համապատասխանաբար թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1», «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» և «ԳՀԱՊՁԲ-7/41-3» ծածկագրով պետական գնման պայմանագրերը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 16.03.2020թ.ին միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Պահապան» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 16.03.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 18.03.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ապրանքը տեխնիկական բնութագրով սահմանված ժամկետում չի մատակարարվել:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած այն փաստարկներին, որ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է 3-4 ամիս ուշացմամբ, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման հիմքով Պայմանագրի միակողմանիորեն լուծման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝ Գնորդը ***իրավունք ունի*** միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակիցը զրկված չէր և կարող էր մինչև Պայմանագրի լուծման մասին ծանուցումը gnumner.am կայքում հրապարակվելը մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները, որը չի կատարել:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոհիշյալ իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 45-րդ հոդվածով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, սույն դեպքում՝ 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը, ի հայտ կարող է գալ միայն Պատվիրատուի կողմից Պայմանագրի 8.9 կետի և Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջի պահպանմամբ: Հակառակ դեպքում Պայմանագիր կնքած անձը (Մասնակիցը) չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ՝ պայմանագիրը չի կարող համարվել լուծված (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ եկած), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները, այն է՝ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակել է տեղեկագրում 18.03.2020թ.-ին, որից հետո՝ 19.03.2020թ.-ին թիվ ՊՆ/ՊՆ/02/875-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պայմանագրի 8.6 կետով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված գնման առարկայի գնումների պլանում ներառված լինելու և գնումների պլանը gnumner.am կայքում հրապարակված լինելու փաստարկներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գնման առարկայի՝ գնումների պլանում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքը սույն Ընթացակարգի քննության շրջանակներից դուրս է և դրանով չի հաստատվում Մասնակցի կողմից ապրանքները Պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարելու հանգամանքը: Հատկապես երբ կողմերի իրավունքները և պարտականությունները ծագել են վերջիններիս միջև կնքված պայմանագրերի հիման վրա՝ որպես ազատ կամքի դրսևորում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պահապան» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.03.2020թ. թիվ 26/26-1/4388-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/85 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պահապան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ